

թիւնը թարգմանում է. «բնակիչը խաղաղութիւն կռուեցին նորա հետ և բաց արին դռները»։—

Բուդայի մասին պատմիչն ասում է (Եր. 203, 4 ն.) թէ Հայաստանի, Ատրպատականի և Շիմշատի կռակալն էր. ըստ թարգմանիչ Բուդա հովանաւոր հանդիսացաւ Հայաստանին, Ատրպատականին և Շիմշատին. Եր. 205, 4 ն. հհ. Սուլէյման բէն Աբդուլմէլիք Հայաստանի վրայ կռակալ է կարգում Ատիյ բէն Ատիյին... իսկ Սուլէյմանից յետոյ նրան (Ատիյին) Հայաստանի վրայ է կարգում Օմար բէն Աբդուլ Ազիզ խալիֆը (Օմար II) Ատիյի անունով է կոչում է Բայլականի գետը نهر عدي . այս հատուածը թարգմանուած է. «Սուլէյման ի. Աբդալլահ (?), կռակաւարեցրեց Հայաստանի վրայ Ադի ի. Ատի... ապա նա նշանակեց Օման բէն Աբտուլ Ազիզին, փայտակարանի ىه عدي ի տիրովը»։ Եթէ թարգմանութիւնը միայն ունենանք մեր առաջ իբրև աղբիւր, ստիպուած պիտի լինենք ընդունելու, որ Օմար իբն Աբդուլազիզ խալիֆը Հայաստանի վրայ կռակալ է նշանակուած եղել, (1?) և նորա անունով ասացել է Բայլականի գետը نهر عدي անունը. Սուլէյմանի և Օմար II-ի օրով Հայաստանի կռակալ եղել է Ատիյ բ. Ատիյ. (Հայաստանի առաջ կռակաւորների մասին տես իմ հետազոտութիւնը. Zeitschr. für arm. philologie, 1903. Heft III, S. 179). Նոյնը առանձին գրքով լոյս տեսած, Armenien unter der arabischen Herrschaft: 1903 թ. 38 ff.

Այս կարճ նկատողութիւնները կարծում ենք, միանգամայն բաւական են, ցոյց տալու համար, որ Բ. Խալաթեանի թարգմանութիւնը Հայոց պատմութեամբ պարապողներին և հետաքրքրուողներին բացի նոր ճիշտ տեղեկութիւններ չտալուց, մոլորութիւնների մէջ միայն կարող է ձգել, ռուսի և ոչ մի արժէք չունի:

ԴՐ. Մ. ՂԱԶԱՐԵԱՆ

«Բանքերի» երկու աստղը եւ Արեւմտեան Հայոց գրականութիւնը

Գրականութեան և արուեստի Վանքերը-ը իւր երկու գրքակներով ապագրել է Վիլհելմ Հայոց արդի գրականութիւնը վերնագրով մի ընդարձակ տեսութիւն:

Հեղինակը որ անշուշտ Պօլսոյ ազգային դրագէտներէց է, թագնուել է * * * Համեստ ծածկանուան տակ:

Այդ համեստութիւնը՝ ի հարկէ՝ պատիւ է բերում իրեն, որպէս և նրա ստեղծած բաղմիմաստ վերնագիրը, որ ահամայ դրաւում է ընթերցողի ուշադրութիւնը:

Անն գրողներ, նոյն-իսկ ոչ գրողներ, որոնք մի առանձին շնորհք ունին փքուն վերնագրեր ստեղծելու: Իհարկէ ես չեմ ասում, թէ երկու աստղը, որ շատ ու քիչ ծանօթ է աշատամիտ ընթերցողներին, ոչ-գրողների թուին է պատկանում. բայց կասեմ, որ այդ աշխատութիւնը մշակուած է ձախ մտքով և գրուած ձախ ձեռքով:

Այս եղբայրացութիւնը դուրս բերի ևս ամբողջ աշխատութիւնը նահատակի համբերութեամբ կարդալուց յետոյ:

Յօդուածի այն մասը, որ զետեղուած է «Բանբեր»-ի առաջին գրքում, նուիրուած է Թիւրքիոյ Հայոց Հին գրականութեան, 1850—80 թուականներին: Անշուշտ հեղինակը միայն է ունեցել ցոյց տալու առաջին—1850—80 և երկրորդ—1880—90 թուականների գրականութիւնների մէջ եղած տարբերութիւնը:

Թէ որքան յաջողել է նրան այդ կամ նոյն իսկ որքան յաջողել է նրան արտայայտելու այն, ինչ որ խոստանում է աշխատութեան վերնագիրը—այդ կը տեսնենք յետոյ: Առ այժմ հարկ եմ համարում մի փոքր կանգ առնելու դրագէտ էֆէնտիի անձնական կարծիքների, համոզումների և դատողութիւնների վրայ:

Շնորհիւ այդ բաղմամբիւ և բազմակողմանի դատողութիւնների, աշխատութիւնը պարզ տեսութիւն յիշելուց դադարելով, դառնում է մի քնդարձակ ուսումնասիրութիւն: Սակայն հեղինակը, զուգէ որոշ նպատակով հենց այդ դատողութիւնների մէջ էլ պատէ պատ է ընկնում: Նա յաճախ թողնելով բուն նիւթը, գէպքը, ինչ-որ քաղաքա-դիւանագիտական ճառեր է խօսում, դուրս բերելով այնպիսի եզրակացութիւններ, որոնք ոչ միայն զուրկ են լոգիկայից, այլև, նոյն իսկ բռնի կերպով, կարելի չէ հաշտեցնել հայկական իրականութեան հետ:

Յօդուածի հենց սկզբում նա ասում է, որ «Հայը իւր վիճակին բարեփոխումը, մինչև 1879 թուականը, երբէք յանկարծահաս դէպքերէն ակնկալած չէր» և երբ թէ հայերը Լեռնական միջամտութեան վրայ յոյս չը դնելով, Թուրքիոյ հետ վար-

ւում էին դարերի թելադրած ձևով, որ կոչւում էր, ըստ երկու աստղի, «ալզային քաղաքականութիւն»... Այդ ալզային կոչուած քաղաքականութիւնը տրամադրում է եղել—հաւատարիմ մնալ կամ հաւատարիմ ձեանալ թուրքին և տնտեսապէս ու մտաւորապէս բարգաւաճել:

Երկու աստղը ծանօթ լինելով այն տարրական ճշմարտութեան, որ ալզերն ու ժողովուրդները շնորհիւ տնտեսական ու մտաւոր բարգաւաճումի ձեռք են բերում կեանքի աւելի բարձր գրութիւն և զոյութեան ընդարձակ իրաւունքներ,—նա առանց քաշուելու պնդում է, որ հայն էլ տնտեսական ու մշտաւոր բարգաւաճումի սանդուխքով յամրոնթաց կը յառաջանար դէպի իտէական մը, զոր դարերէ ի վեր հեռո՞ւն, շատ հեռուն աղօտալոյս իմն կրնողնշմարուէր...

Ձը մոռանանք սակ, որ երկու աստղի խօսքը Թուրքիոյ լծի տակ ձնշուած և ամբողջ քանի դար մահմեդական խաժաժութեանց հալածուած ու հարստահարուած հայերի մասին է:

Եւ այդ հայը երոպական միջամտութեան վրայ իւր օգտին յոյս չը դնելով, ձգտում էր ձեռք բերել իւր վիճակի բարեփոխումը սեփական միջոցներով, այն է տնտեսապէս ու մտաւորապէս բարգաւաճելով:

Մարդկային ալզի զոյութեան պատմութիւնը մինչև մեր օրերը գէւ չի արձանագրել մի դէպք, մի օրինակ, որ ստրուկ ալզերը լոկ խաղաղ ծանապարհով ստացած լինեն ո՞րևէ տարրական իրաւունք:

Արդեօք հայը երկար դարերի ընթացքում տեսել է մի գէթ չնչին օրինակ, որ Օսմանեան կռաւարութիւնը ոպաներից մէկն ու մէկի վիճակը բարեփոխելու տրամադրութիւն ցոյց տուած լինի:

Իհարկէ՝ ոչ: Ընդհակառակը, նա մի կենդանի վկայ է այն բանին, որ Թիւրքիան ինչ բարեփոխութիւն էլ որ մտցրել է քրիստոնեայ հպատակների կեանքի մէջ—այդ արել է շնորհիւ երօպական անմիջական միջամտութեան:

Ուրեմն ինչո՞վ հայն ուզում էր հասնել շատ հեռուն ընդշմարուող իտէականին:

—Ալզային քաղաքականութեամբ, ասում է յօդուածագիրը այսինքն՝ հաւատարմութեամբ, խաղաղ յառաջագիմութեամբ:

Ասացինք, որ տնտեսական ու մտաւոր բարգաւաճումը մի սանդուխք է, որով կարելի է շատ վեր բարձրանալ և շատ

բան ձեռք բերել. սակայն այդ հնարաւոր է անկախ ազգերին միայն. Որպէս զի օտար լծի տակ գտնուող մի ազգ կարողանայ դրանով որոշ բարձրութեան հասնել կամ խօսքերս մասնաւորելով ասենք, որպէս զի Թիւրքիոյ լծի տակ հեծող հայը տընտեսական ու մտաւորական բարգաւաճումով հասնի հեռու ընդնշմարուող իտէականին անհրաժեշտ է, որ տնտեսապէս ու մտաւորապէս բարգաւաճելը թոյլատրուի իրեն, նրա առաջև չը յարուցուին օրինաւոր կամ ապօրինի արգելքներ, պաշտօնական կամ կողմնակի խոչընդոտներ... որ նա ունենայ սրտի ու հոգու անգործութիւն, մաքի խաղաղութիւն և չառեանգութիւն նրա կիներ ու աղջիկը, տղան ու տեղը հրոյ ճարակ չը լինին, չը կողոպտուին, չը հալածուին, չը մորթուին... Որ պետական օրէնքը ճանաչի նրա մարդկային իրաւունքները՝ ունենայ խօսքի ազատութիւն, իրաւունք իւր դատը պաշտպանելու և ազատ ճանապարհորդութիւն անելու արտօնութիւն... Որ սահմանուի որոշ հարկ ու տուրք և պետութեան պաշտօնեաները սկսած սադրապանից մինչև յետին դաբթիան, դադարեն երկիրը կաշառաւորութեամբ կողոպտելուց ու կեղեքելուց... Որ հայի հետ ապրող տարրերը, թիւրք, քիւրդ, չեքքէս և այլ մահմեդական բաշխօղակները չը խանգարեն հային կուլտուրական յառաջագիծութեան գործում, այլ ընդհակառակը նրա հետ ձեռք ձեռքի տուած ընթանան բաղաբակրթութեան շաւղով...

Որպէսզի մի երկրի ժողովուրդը կարողանայ տնտեսապէս ու մտաւորապէս բարգաւաճել հեռու իտէականին հասնելու համար, անհրաժեշտ են շատ պայմանի արտօնութիւններ:

Եւ Թիւրքիան, որ բացարձակ բռնապետական մի պետութիւն է, նա թոյլ չի տուել և չըպիտի թոյլ տայ, որ հպատակները տնտեսապէս ու մտաւորապէս բարգաւաճելով իւր գահի հիմքը փորեն ու տապալեն: Մնում է երուպական միջամտութիւնը, որի վրայ դրած ունին Թիւրքիոյ լծի տակ հեծող բոլոր քրիստոնեայ ազգերը:

Ասացի, որ երկու աստղի աշխատութեան առաջին կէսը, վերաբերում է Հայոց գրականութեան. թէև բուն խնդիրը երկրորդական, նոյն իսկ երրորդական տեղն է բռնում: Բացի սըրանից աշխատութիւնը զուրկ է մտքերի կապակցութիւնից և հեռեկողականութիւնից: Նա խօսում է 80-ական թուականների մասին, սակայն հանդէս են գալիս աւելի հին՝ 50 թ. և աւելի նոր՝ 90 թ. ականների գրական դէմքեր: Պէտք է ասել որ

շատ անգամ նա մօտենում է կենսական հարցերի, շօշափում է լուրջ խնդիրներ, երբ մտածում ես, որ ահա քո հետաքրքրութիւնը զոհացում պիտի ստանայ, սակայն զուր յոյս. նրա գրիչը կարծես երկու ծայր ունի, գրում է մէկով, ջնջում միւսով:

Գրականութեան ու մամուլի յառաջագիմութիւնը մի երկրում կախուած է նրանց շրջապատող պայմաններից, Երկու աստղը չի մոռացել մօտենալու այդ խնդրին: Բայց ի՞նչ եզրակացութիւն կարելի է դուրս բերել հակասական մտքերից: Նա ասում է, որ Թիւրքիայում տպագրական խօսքը ազատ էր գրաքննութիւնից: Ուրեմն նա պիտի ծաղկէր, զարգանար, քանի որ չէր հանդիպում ոչ մի օրինական արգելքի: Սակայն նա չի ծաղկում, այլ ապրում է շատ աղքատ ու ոչորմելի կեանքով: Երկու աստղն այդ բանը բացատրում է նրանով, որ թիւրք պաշտօնեաները արգելքներ էին յարուցանում առանձին լոյս տեսնող գրքերի դէմ, և՛ բերում է բանտարկութիւնների ու չարչարանքների օրինակներ: Հակառակ սրանց նա շեշտում է որ նոյնիսկ այդ պայմանների մէջ կարելի էր հրատարակել շատ յանդուգն բաներ, ինչպէս է Գարեգին Սրուանձաեանի և Վահան Պարախակցու աշխատութիւնները, որոնք լոյս են տեսել առանձին գրքերով, Բաֆֆու Խենթն ու Խամսայի մելիքութիւնները «Արեւելք»-ում, մինչև անգամ Պեշիկթաշլեանի «Գուլ զով խնդրես» բանաստեղծութիւնը աննշան փոփոխութեամբ:

Մենք գիտենք, որ կամայականութիւնը յաճախ աւելի միասակար է, քան հաստատուն օրէնքը: Վերջին դիպուածում մարդս գիտէ թէ ի՞նչ կարող է գրել և հրատարակել, այնինչ առաջին դիպուածում ամեն ինչ կախուած է պաշտօնեայի բացարձակ քմահաճոյքից: Այնուամենայնիւ երկու աստղի բերած օրինակներից պարզ երևում է, որ թրքական կամայականութիւնը այդ հարցում նոյնքան թոյլ է եղել, որքան ինքը պետութիւնը: Այդ թույլութիւնը աւելի լաւ ըմբռնելու համար պէտք է թերթել նոյն ժամանակուայ հայ թերթերն ու կարս գալ սահմանադրութեան հանգիսի նկարագրութիւնները, ազգասիրական ճառերը, բանաստեղծութիւններն ու երգերը...

Այս բոլորից յետոյ այնտեղ թէ թրքական կամայականութեան շնորհիւ հնարաւոր չի եղել առանձին գրքերով վիպական, գիտական, իմաստասիրական և այլ այս կարգի աշխատութիւնների լոյս ընծայելը—հակասում է վերը բերած օրինակ-

ներին, չէ՞ որ Թիւրքիոյ Հայոց գրականութիւնը լիքն է բազմաթիւ աշխատութիւններով, չէ՞ որ «Երկրագունդը» զուտ իմաստասիրական էր և բովանդակում Թիւրքիոյ Հայոց գրագէտփիլիսոփայ-լեզուագէտ Ե. Տէմիրճիպաշեանի աշխարհաստեղծ մտքերը, Հապապ Ը. Ա. Արփիարեանի հոգեկաւոր «Ապուշը»...

Դատողութիւններ կոչուած բառախաղութեան բառի մէջ շարիշար անցնում են բանաստեղծներ, վիպագիրներ, հրապարակախօսներ, ինչպէս—Պէշիկթաշլեան, Նարբէյ, ԱՃլմեան, Թերյան, Ռուսինեան, Մամուրեան, Զոհրաբ, Բաշալեան, Զոպանեան, Հրանտ և այլք. ապա գալիս է օրաթերթերի ու պարբերականների շարքը—Հայաստան, Նոյեան Ազաւնի, Արփի Արարատեան, Երևակ, Մեղու, Մասիս, Երկրագունդ, Արևելք և այլն։ Սակայն այն գրական գործիչները և այն օրաթերթերն ու պարբերական հրատարակութիւնները, որոնք վերաբերում են անցեալ՝ 50—80 թուականների շրջանին, գալիս անցնում են ստուերների նման, բոլորն էլ անկենդան, դժգոյն, առանց գրական կամ հրապարակախօսական իդէալի, առանց համոզմունքի, առանց դաւանանքի։ Հետաքրքիր ընթերցողն իդուր կը փնտրի նրանց կատարած դերը Թիւրքիոյ Հայոց մտաւոր ասպարեզում, նրանց թողած ազդեցութիւնը կամ աննշան հետքն այդ ազդեցութեան միջավայրի վրայ։ Իդուր կուզենաք գիտնալ, թէ այդ օրաթերթերն ու պարբերականներն ինչով էին դանազանւում Թիւրքիոյ Հայոց արդի մամուլից, թէ այդ գրագէտներն ու գրական գործիչներն ինչ են բարոյել, ինչպիսի հաւցեր վարձեցրել, ինչ խնդիրներով զբաղուել ու զբաղեցրել իրենց ընթերցողներին, թէ ինչ է եղել նրանց ուղղութիւնը, դաւանանքը, կոչումն ու նշանաբանը. կամ արդեօք դրանք ոչ և է ուղղութիւն, կոչում ու դաւանանք ունեցել են, թէ՞ աշխարհ են եկել անգիտակցաբար, գործել, գրել ու մրտաւել են անգիտակցաբար, հանդիսանալով որպէս միեռնոր թիւրիմացութիւն Թիւրքիոյ Հայոց գրական հորեղծների վրայ...

Այժմ մի յետադարձ ակնարկ ձգենք այն երեսուն տարիների վրայ, երբ ապրել են այդ գրական գործիչներն ու գրականութիւնը։ Դրանք փոթորկալից տարիներ էին։ Այդ շրջանի հենց առաջին տարիներից բռնկեց դաշնակից պետութիւնների պատերազմը Ռուսաստանի դէմ, որին մասնակցում էր նաև Թիւրքիան։ Դաշնակցութեան հզօր նաւատորմն անցաւ Բոսֆորից Սև ծովը և Սև ծովից Բոսֆոր։ Այդ թուականներից

սկսած Թիւրքիոյ դռներն աւելի լայն բացուեցան արեւմտեան բաղաբակրթութեան առաջ՝ մի կողմից, տնտեսական ու դիւանագիտական մրցումներէ առաջ միւս կողմից: Այնուհետեւ սկսուեցին Կրէտէի, Զէյթունի և Բալկանեան թերակղզու փոխնիփոխ և պարբերական ապստամբութիւնները: Այդ ապստամբութիւններից անկախ, տեղի ունեցաւ Պոլսոյ Հայոց ներքին շարժումները ամիրայականութեան դէմ, որը շնորհեց նրանց «Աղգային սահմանադրութիւն»-ը: Ապա բռնկեց բուլղարական ապստամբութիւնը և Ռուս-Տաճկական պատերազմը: Աերջին անգամ իննելով Թիւրքիան յաղթուեց. Ռուսական զօրքը յաղթական կերպով մուտք գործեց Սան-Ստեփանօ, ուր կնքուեցաւ Հաշտութեան առաջին դաշնագիրը, որը հային շնորհեց նախ 16, ապա 61 յօդուածք: Իսկ սրանից առաջ տեղի ունեցաւ Պոլսոյ մեծ յեղափոխութիւնը, որին զոհ գնաց նախ Մուլթան Ադիյը յօգուտ Մուրադի, ապա Մուրադը յօգուտ Արդիւլ-Համիդի...

Եւ այս բոլոր փոթորիկները Թիւրքիոյ զլեից անցել են մինչև 80 թուականները:

Մենք գիտենք, որ մամուլն ու զբաղանութիւնը իրենց ժամանակի հայելիներն են: Որքան էլ ձախող, դժնդակ և աննպաստ պայմանների մէջ գտնուեն նրանք, այնուամենայնիւ անկարելի է, որ նրանց շուրջը, նրանց քիթի տակ կատարուող դէպքերն ու երեւոյթները իրենց պղծեցութիւնը չը թողնեն:

Բայց ի՞նչ է ներկայացնում Թիւրքիոյ հայոց երեսնամեայ զրականութիւնը երկու աստղի գրչի տակ, այն զրականութիւնը, որ անցել է թրքական փոթորիկների բովից:

Ասացինք, որ ոչինչ:

Սակայն Թիւրքիոյ Հայոց զրականութիւնն ու մամուլը այնքան տոգոյն ու անկենդան չեն եղել, որպէս ներկայացնում է «Թիւրքիոյ Հայոց արդի զրականութեան» հեղինակը և մեզ պղպտէս չէին ներկայանայ. եթէ երկու աստղը չունենար յետին միտք, որի մասին կը խօսեմ իւր տեղում և Թիւրքիոյ Հայոց մամուլի ու զրականութեան երեսնամեայ պատմութեան յուսանցքը իւր տափակ զատողութիւններով սևադնելու տեղի թոյլ տար, որ զրականութիւնն ու մամուլը իրենք խօսէին իրենց մասին և խօսէին նոյն ժամանակի լեզուով ու ոգով:

Այդ տոգոյն դէմքերի ու մամուլի թուին պատկանում է ի միջի պլոյ նաև Մամուրեանը և իւր «Արեւելեան մամուլը»: Թրքահայ խոշոր զրական անձնաւորութեան մասին երկու աստ-

ղը բաւականանում է ասելով, որ նա գրում էր կայծակնացայտ քրոնիկներ, որ մեծ հաճոյքով կը լաքուէին... Բայց ի՞նչ կայծակնացայտ քրոնիկներ էին, որո՞նք էին քրոնիկների նիւթը և ինչո՞ւ մեծ հաճոյքով կը լարուէին — այդ մասին ոչ մի խօսք։ Սակայն ես գիտեմ, որ 84 թուականների կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ, «Մասիս» ի էջերում պ. Ա. Արփիարեանը կարծեմ «Հրապարակ» ծածկանունն տակ, էլ յուսանք չը մնաց որ չթափեց Շահումբեկի — Մամուրեանի գլխին։ Ի՞նչ էր այդ։ Հնի ու նորի կոի՞ւն արդեօք։ Բայց Արփիարեանն այն ժամանակ որպէս գրող դեռ այնքան խակ էր, տհաս, որ չէր կարող նոր սերնդի ներկայացուցիչը հանդիսանալ, իսկ Մամուրեանը դեռ այնքան երիտասարդ էր, որ հնեւորի շարքը դասել յանցանք կը լինէր։ Ուրեմն ինչ անուն պէտք էր տալ այդ շատ անգամ անձնական պատիւ շոշափող բանաւորներին — այս հարցին պատասխանել աւելորդ եմ համարում, որովհետեւ ասածս ապացույանելու համար ձեռքիս տակ չունիմ «Արեւելեան մամուլ»-ն ու «Մասիս»-ը, բայց կասեմ, որ այդ և նման բանաւորների համառօտութիւնը աւելի լաւ կարող էր հայելացնել նոյն ժամանակուայ ոգին, մամուլի ու գրական գործիչների ուղղութիւնը, նրանց տենդենցիան և աշխարհահայեացքը, քան կարողացել է հայելացնել երկու աստղը իւր յեղբորդի դատողութիւններով։

Ձը մոռանամ յիշել, որ երկու աստղը իւր յիշեալ աշխատութեան մէջ պատմում է մեզ անյայտ մի նորութեան մասին, այն է Թիւրքիոյ հայերը ոչ հայրենիքի, ոչ Հայաստանի գաղափար են ունեցել մինչև այն օրը, երբ Բօսֆօրի շքեղ ափերում սկսուեց հայ թաարերգութիւնը...

«Թատերական գրականութիւնը գաղթական հայոց հայրենիքի գաղափարը կուտար»... Բիւշ յետոյ աւելացնում է. «Թատերական գրականութիւնը ծնաւ Հայաստանի գաղափար մը»...

Այս տողերից կարելի է եզրակացնել, որ մինչև Կ. Պօլսում թատերական գրականութեան ծնունդ առնելը Թիւրքիոյ հայերը Հայրենիքի ու Հայաստանի գաղափար չեն ունեցել։

Տարօրինակ նորութիւն։

Ճշմարիտ չը գիտեմ ի՞նչ անուն տալ երկու աստղին, որը թոյլ է տալիս իրեն այնքան ծանր կերպով վերաւորել Թիւրքիոյ հայերին, այն հայերին, որոնց այդ գգթադդ երկրում գամողը ուրիշ ոչ մի բան չէ, եթէ ոչ հայրենիքի սէրը։

Ինչպէս երևում է, երկու աստղը դեռ չը գիտէ, որ հայրենիքի գաղափարն արհեստական կերպով չի պատուաստուում ժարդկանց վրայ, այլ նա մտնում է մօր կաթի հետ: Հայրենիքի գաղափարը շօշափող գրուածքները, լինի թատերգութիւն, վէպ, բանաստեղծութիւն կամ մի ուրիշ բան, միմիայն նպաստում են այդ գաղափարի սերմերի արագ աճելուն, հրահրում, վառում են նրան և տալիս որոշ բնաւորութիւն, որոշ ուղղութիւն: Մենք ճանաչում ենք ազգեր ու ցեղեր, որոնք ոչ միայն թատերգութիւն չունին, այլ և գիր չունին, այնուամենայնիւ հայրենասիրութեան մէջ յետ չեն մնալ ոչ մի կուլտուրական ազգից:

Ո՞վ է դրանց մէջ գրել հայրենիքի գաղափարը...

Թիւրքիոյ Հայոց գրականութեան ոչ մի ճիւղի մասին դեռ ոչինչ չստած կամ համարեա՞ թէ ոչինչ չստած, երկու աստղը յանկարծ կանգ է առնում պատմութեան վրայ և գտնում է որ «Պատմութիւնը շատ ետ մնաց Թիւրքիոյ Հայոց մտաւորական յառաջնադարումի գնացքին մէջ»...

Եւ ահա՞ թէ ինչի մէջ է որոնում պատմութեան յետամնացութիւնը.

ա) Որ երկրի պայմանները չեն թոյլ տուել պատմաբանների պատրաստելու, ոչ էլ թոյլ են տուել աշխատելու, սովորելու...

Բայց որոնք էին այդ պայմանները. Թիւրքիոյ ո՞ր օրէնքն է արգելել հային սովորելու կամ ուսումնասիրելու իւր կամ օտար պատմութիւններ:

բ) Որ չը կային մենաստաններ, նման Մխիթարեանների, ուր եկեղեցականները հանդարտօրէն աշխատելու դիւրութիւն ունենային...

Իհարկէ Հայաստանում Ղազարու կղզի երևակայել կարելի է, սակայն մենք էլ քիչ վաճառք, մենաստաններ չունինք, ուր եկեղեցականները կարող էին հանդարտօրէն աշխատել: Ունինք Վարազը, Արմաշի դպրեմանը, Երուսաղէմը և այլն: Բացի այդ, պատմութիւնը հանդարտօրէն ուսումնասիրելու համար ինչո՞ւ անպատճառ մենաստաններ որոնել: Հանգուցեալ Մուրատեան Մելքիսեդեկ արքեպիսկոպոսը մենաստաններից դուրս էէ՞ր որ ուսումնասիրեց ու գրեց իւր եկեղեցական պատմութիւնը:

գ) Որ Թիւրքիոյ Հայերը չեն ունեցել ս. Էջմիածնի պէս

ձեմարան կամ Ներսիսեան վարժարան, ուր պատմագէտները մի կողմից ուսուցանէին. միւս կողմից պարապ ժամերը նուիրէին պատմութեան...

Չը պէտք է մոռանալ, որ դեռ երեսնական թուականներում, բացի միւս երկսեռ դպրոցներից ու մասնաւոր վարժարաններից, Պօլսեցիք ունեցել են Սկիւտարի ձեմարանը, որ մինչև իւր վերջնական փակումը 1841 թուի վերջերը, տուել է բաւական թուով կրթուած երիտասարդներ: Իսկ աւելի ուշ հիմնուած էր Ռ. Պէրպէրեանի, ապա Կենդրոնական վարժարանները, որոնք, մանաւանդ վերջինս, յետ չէին մնալ ոչ ս. Էջմիածնի ձեմարանից, ոչ Ներսիսեան դպրոցից: Իհարկէ աւելորդ է յիշել, որ յիշեալ բոլոր վարժարաններում եւս, ի թիւս այլ գիտնական առարկաների, աւանդուել է նաեւ պատմութիւն:

Այս խնդրի նկատմամբ երկու աստղը մի միջնադարեան գեոհիկ միտք էլ է յայտնում. այն է որ Լուսաւորչական հայը հիգեորական պատմագիր լինել չի կարող, թէ նա կամ զազափարից պէտք է հրաժարուի կամ վեղարից...

Բայց ինչո՞ւ, ի՞նչով վեղարը արգելք հարող է դառնալ այն էլ պատմագիր լինելու, ուր կրօնական և դաւանարանական հարցերը այնքան աննշան տեղ են բռնում: Հապա ինչո՞ւ Միթիմարեանների, որպէս հոգեորականների, գրուածքները Առաւօդաֆէի՞ չէք ենթարկում...

Երկու աստղը կարող է պատասխանել, որ իւր խօսքը լուսաւորչական հայ վարդապետների մասին է. մի բան որի վրայ հրաւիրում ենք երկու աստղ էֆէնդու. ընթերցողների մասնաւոր ուշադրութիւնը: Արդէն վաղուց, դեռ «Մշակին» էջերից, ես նկատել եմ, որ այդ էֆէնդու բոլոր գրուածքներից Ս. Ղազարու թիւը հոտն է փչում: Այս հանգամանքը չը պիտի մոռանան նաեւ մեր ընթերցողները:

Երկու աստղի աշխատութեան կէսը «Բանբեր»-ի առաջին գրքում նուիրուած է 50—80 թուականների գրականութեան: Մենք արդէն տեսանք, որ երկու աստղի գրչի տակ երեսնամեայ գրական շրջանը ներկայացնում է մի ընդարձակ գրական ամպուլութիւն. ոչ մամուլը և ոչ գրական գործիչները ոչինչ չեն արել հայի մասաւոր ասպարիզում, ինի հրապարակախօսութիւն, վէպ, բանաստեղծութիւն, պատմութիւն և այլն և այլն:

Իսկ «Բանբեր» ի երկրորդ գրքից, այն է 80 թուականից

սկսած երեան են դալիս նոր գրական դէմքեր և երկու առաջի լեզուն էլ մի քիչ փոխուած է։ Այդ թուականներից սկսած «Մասիս»-ն ու «Արեւելք»-ը միանում են։ Եթէ Տէր մի արասցէ այդ երկու թերթերը չը միանային, գրական դժեւոր էլ երկու ջոկատի բաժնուած մնալով, հաւասարապէս տկարութեան պիտի դատապարտուէին (?) եւ պիտի չկարողանային արտադրել գրական այն ամբողջակի գործը, որ ներդաշնակ ստեղծագործութիւնն է միմեանց վրայ փոխադարձաբար ազդող, իրար ներշնչող մտքերու եւ սրտերու։

Եւ երկու աստղի կարծիքով, Արեւմտեան հայոց գրական պատմութեան գլխաւոր էջերը, մինչեւ 1891 թիւը պիտի փնտրենք միացեալ երկու թերթերու մէջ։ Ասել է գրական մի նոր ոսկէ դարազրուիւ, ուր սկսուած են վիպականեր, յօդուածներ, քրոնիկներ, երգիծաբանականներ, թէեւ իրարից անջատ, ըայց եւ այնպէս, ընկերական, գրական, լեզուական համանման զաղափարներով զանգուած ամբողջութիւն մի կը պատկերացնեն...

Սրանից մօտ ութ-ինը տարի առաջ Պօլսից գրած մի թղթակցութեանս մէջ ես շեշտել եմ իմ այդ միութեան ու ամբողջութեան մասին, որ կայանում էր միմեանց գովելու, փառաբանելու ու երկինք բարձրացնելու մէջ։ յիշել եմ, որ այդ իրերագովութեան շնորհիւ համբաւները յանկարծ գրական հանձարներ էին հռչակուած և Տէմիրձիպաշեանի անմոռութիւնները հասարակ մահկանացուների մտքին անմատչելի բարձր փիլիսոփայութիւններ։ Այժմ ինձ մնում է ասել, որ այդ միութիւնը, որ զուտ տնտեսական լինելով գաղափարականի հետ չունէր ոչ մի առնչութիւն, այն օգուտը միայն ունեցաւ, որ երիտասարդ գրագէտներից մեծ մասը շնորհիւ անտեղի գովասանքների շփացան, դարձան մեծամիտներ և ապա անմիտներ։ Այո՛, անմիտներ, որովհետեւ երկու թերթերն էլ իրենց տրամադրութեան տակ լինելով, ով ինչ ուզեց գրեց, առանց կիտիկայից վախ ունենալու։

Բայց դռնած երկու աստղին։

«Արեւելք»ը, որ պատրաստուած գրագէտների խումբ չունէր, ներկայացնում է երկու նոր անձնաւորութիւն, որոնցից մէկը, որ «Արեւելքի» քրոնակագիր լինելով հանդերձ, Աղգային յօդուածներն էլ կը գրէր, ըազմաթիւ հակառակորդներ ու

Նաեւ ըարեկամներ ալ ունեցաւ։ Այդ բրոնկազրի անունը Ա. Արփիարեան էր, որի մասին տարիներ ետքը Գրիգոր Ջոհրապ կը գրէր թր մշտնջենական պատիւը պիտի ըլլայ մեր մէջ, առաջին անգամ տանելը, մօտեցնելը գրականութիւնը ժողովրդին, փոխանակ ժողովուրդը բերելու անխախտ գրականութեան մը բարձունքին»...

Իսկ ինչ էր այդ բրոնկազրի գրածը, որին երկինք է հանում Գրիգոր Ջոհրապ։ Բայց տեսէք թէ 1892 թ. նոյն բրոնկազրի—Ա. Արփիարեանի մասին ինչ է ասում դեռ դպրոցական իստարանները նոր թողած Արշակ Չօպանեանը։

«Արեւելք»-ի բրոնկազրիը կու գայ և կը ծնի բնապաշտ դպրոցը. խմբագրական, բրոնիկ, նորավէպ, վիպակ, ամեն բան կը գրէ, ընկերական խնդիրներ ձեռք կառնէ, դատեր կը պաշտպանէ, գրականութիւնը ատեն մը կընէ, կը խորհրդակցի, կը խօսի, կը վիճաբանի, կը խածէ, կը կամթէ, կը խնդայ, կը բռնէ հրապարակը»...

Մի խօսքով հազարարուեստ, եթէ թոյլ կը տրուի ինձ մի այսպիսի բառ գործածել, մի գրական հանձար։

Իսկ փաստ՝ որ մենք էլ առիթ ունենայինք այդ գրական հանձարի հետ ծանօթանալու—չը կայ։

Եւ չը կայ նրա համար, որ այդ գովեստները մի տեսակ խնամական փոխադարձ հատուցումներ էին այնպէս որ եթէ այսօր նոյն Գրիգոր Ջոհրապից և Արշակ Չօպանեանից հարցնէք, երկուսն էլ ձեռքները խղճների վրայ դրած, կը հրաժարուին իրենց շուայլած գովեստներից «Արեւելք»-ի հանձարաւոր բրոնկազրի հասցէին։

Երկու աստղը խօսելով նոր գրականութեան առաջին շրջանի մասին, յիշում է Մելքոն Կիրճեանի (Հրանտ) մասին և նրա գաղթական հայերի մասին գրած յօդուածներից բերում է բազմաթիւ կտորներ։ Իրաւ որ այդ երիտասարդը վարվումն գրողներից մէկն էր և մեծ ապագայ էր խոստանում նրան, եթէ դժբաղաւորութիւն չունենար Արփիարեանի գիրկը նետուելու։ Նոյն դժբաղաւորութիւնը պատահեց նաև Լևոն Բաշայեանին։ Այս երկու երիտասարդ և անփորձ գրողները արժանացան միմիայն տեւոր համբաւի, ուր վերջակէտ դրուեցաւ նաև իրենց գրական գործունէութեան։ Հրանտի արժանաւորութիւնը իւր ընտրած ճիւղի մէջ զօրանալով հանդերձ, ես զարմանում եմ, որ երկու աստղը նրան մի տեսակ բացառիկ տեղ է տուել։

Միթէ նրանից առաջ հայ մամուլն ու գրագէտներն ամենեւին չէին զբաղուել զարիպների կեանքով: Ինչ էին արգեօք Մամուրեանի կայծակնաց այտ քրոնիկները: Եւ ի՞նչ որ Հրանտից շատ առաջ Մամուրեանն էր, որ իւր ամբողջ ուշադրութիւնը դարձրեց զարիպների վրայ և անխնայ հարուածեց Ազգային ու խառն ժողովների և պատրիարքարանի սառն վերաբերմունքը դէպի այդ հայրենիքից, տուն ու տեղից զրկուած, կիսամերկ ու չարատանջ պանդուխտները: Եւ միմիայն Մամուրեանը: Սակայն ի՞նչու երկու աստղը լուել է նրանց մասին—Սա մի հանելուկ է, որի մասին ես կը խօսեմ յետոյ:

Հրանտի մասին խօսքը վերջացնելուց և վիպագրութեան առթիւ երկայն դատողութիւններ անելուց յետոյ երկու աստղը ասում է որ 1884—90 թուականը Պոլիսն ունեցաւ նոր չորս վիպասաններ:

Այդ չորսից առաջինն է, ըստ երկու աստղի, Գրիգոր Զօհրապ, որ իր վիպակներուն մէջ առաջնակարգ յատկութիւններով օժտուած գրագէտ հանդիսացաւ:

Առաջնակարգ յատկութիւններով օժտուած գրագէտ: Բայց նախ՝ Պոլսեցի գրագէտների համար ոչ մի դժուարութիւն չի ներկայացնում պատիկ բաներին խոշոր բնաւորութիւն տալը և երկրորդ՝ երախտահատոյց լինելու զգացումը: Մի քանի տող առաջ մենք տեսանք թէ ի՞նչպէս առաջնակարգ յատկութիւններով օժտուած գրագէտ Գրիգոր Զօհրապը երկինք էր բարձրացնում «Արևելք»-ի քրոնիկագրին՝ Արփիարեանին: Այժմ էլ հերթը երկու աստղ—Արփիարեանինն է, որ երկինք հանէ Գրիգոր Զօհրապին:

Իսկ ի՞նչ է ասում իրականութիւնը: Թէև ես մտայ Պոլիս 1888 թ. երբ Գրիգոր Զօհրապը շատ ու բիչ յառաջագիմել էր, այնուամենայնիւ հետեւելով նրա կեանքից առած պատկերներին վիպագրողի մի առանձին արժանաւորութեան չը հանդիպեցի. դրանք բոլորն էլ մի տեսակ ճառեր են, շատ անգամ տաղտկալի: Արդէն այն բանը, որ Նովկասի հայ ընթերցողների մեծ մասը Զօհրապի անունն անգամ չի լսել, ապացոյց է, որ նա գրական մի առանձին արժանիք չէ ներկայացնում, թող թէ առաջնակարգ յատկութիւններով օժտուած գրագէտ լինէր:

Նոյնը կարելի է ասել նաև Լևոն Բաշալեանի մասին, այն տարբերութեամբ միայն, որ «Մուրճի խմբագրութիւնը չը գիտենք ինչո՞ւ սկսեց հրատարակել նրա մի քանի պատմութեա-

ները, որի վրայ շեշտում է երկու աստղը, Հարկ եմ համարում նկատել, որ դեռ 88 թուականներում Լեոն Բաշալեանը Տէմիր-ձիպաշեանի պաշտոններին էր և աշակերտը, որի համար էլ պաշտուող ուսուցիչը—իւր աշակերտի գրական մի տեսութեան առթիւ ասում է, որ այն քաջ հայագէտի գրուածն էր, հասուն մտքի ծնունդ եւ վարժ գրչի արդիւնք...

Այս դատաւճիռը կարդացում է մի տասնեութ տարեկան պատանու հասցէին և գրողը... շատ չանցած համարեա խելագարուեց:

Իսկ ինչ վերաբերում է երկու աստղի ներրողականին, այդ շատ բնական է այն պարզ պատճառով, որ Լ. Բաշալեանը Արփիարեանի մտերիմն ու գործակիցն է եղել և նրա համար նահատակուելու Երկու աստղը եթէ ուրիշ լեզուով խօսէր, ով գիտէ Բաշալեանն էլ մի գեղեցիկ օր ինչ ծածկեալ խորհուրդներ պիտի բանար ժամուրի էջերում:

Լեոն Բաշալեանից յետոյ գալիս է մեծկակ վէպով մը ներկայացող միակ նոր գրագէտ Տիգրան Կամսարականը: Այդ վէպը «վարժապետին ալջիկը»-ն էր հրատարակուած «Արեւելք»-ում, երբ նոր գրագէտը տասնութ տասնինը տարեկան պատանի էր: Երկու աստղի ասելով, Մարկոս Աղաբէկեանը այդ նոր գրագէտի յիշեալ վէպի առթիւ բացականչել է «Թիւրքիոյ Հայերն իրենց Արեւելքը պիտի ունենան»: Մարկոս Աղաբէկեանին ես համարում եմ հեղինակութիւն, բայց կասկածում եմ թէ նա մի այդպիսի խօսք ասած լինի Պոլսի հայ գրականութեան և գրագէտների մասին ես առիթ եմ ունեցել խօսելու պ. Աղաբէկեանի հետ. նա մինչև վերջն էլ յոռետես էր և չէր սխալւում:

Այս շրջանի մնացած գրագէտների և նրանց գրական վաստակների վրայով երկու աստղն անցնում է շատ հարևանցի: Այստեղ էլ երևում են զանազան անուններ ու թերթեր, բայց աւելի նիհար դժգոյն բան «Մասիս-Արեւելք»-ը և Բաշալեան, Վիւրճեան, Կամսարական ու Զօհրապները: Ապա հերթը գալիս է Ռուսահայերի կենքի ու գրականութեան ուսումնասիրութեանը: Երկու աստղը շատ ձիշտ է ասում, որ մի ժամանակ Ռուսահայերով զրադուելը Պոլսի հայ գրագէտների համար մօդա էր դարձել: Տեղից վեր ելնողը ձգտում էր Ռուսաստանի հայերի մասին մի բան գրել: Մինչև անգամ մի բանիսը փորձ արին Պոլսեցոց Ռուսական գրականութեան հետ ծանօթացնելու,

Թէև ոչ մի գաղափար չունէին այդ գրականութեան մասին: Սակայն այդ մօդան էլ միւս մօդաների նման անցաւ, միմիայն տխուր յիշատակ թողնելով «Արևելք»-ի և «Մասիս» էջերում: Եւ անցաւ այն պատճառով, որ գրագէտներից ոչ մէկը շատ ու բիշ հիմնուոր ծանօթութիւն ունէր Վովկասի Հայերի մտաւոր շարժման մասին: Թիւրքիոյ Հայերի ունեցած ծանօթութիւնը Վովկասի Հայերի մասին Արփիարեանի տուած տեղեկութիւններից այն կողմն էր անցնում. իսկ Արփիարեանի տուած տեղեկութիւնները դառնում էին միմիայն «Մշակի» ու մշակականների շուրջը: Պէտք է ասել, որ Վովկասի Հայերի մտաւոր շարժումով ու կեանքով զբաղուելու հարցը յառաջ էր քաշել Արփիարեանը, որի սրտին շատ մօտիկ էր յիշեալ թերթի հակաեկեղեցական և հակակրօնական ուղղութիւնը, որի համար՝ ինչպէս խօսում էին չար լեզուները, իւր ուսուցչից՝ Ալիշանից քաջայերական նամակներ էր ստանում, բանկնօթների հետ միասին: Արդէն երկու աստղի այն տողերը թէ՛ «Լէօն» դեռ նոր մը՝ և արդէն իր ապագան կը գուշակուի և իր վրա ընդարձակօրէն կը խօսուի, իսկ Գրիգոր Արծրունի Զուլիգերիայէն ուղղակի «Արևելք»-ին ու «Մասիս»-ին կը գրէ՝ բաւական ապացոյց է թէ ինչ թթու խմորով էին խմորուած, Պոլսի Հայ գրագէտները:

Արդէն 1888 թ. առաջին անգամ Պօլիս գնալով, երբ «Արևելք»-ի խմբագրատան մէջ Արփիարեանի միջոցով ծանօթագայ նոյն ժամանակի գրագէտ-հրապարակաւորների հետ և երբ խօսք բացուեց Վովկասի Հայերի ու Ռուսահայ գրականութեան մասին, ինձ թուաց թէ շրջապատուած եմ շինացիներով, այնքան անհիմն, վայրկիւցային և սխալ էին նրանց ունեցած տեղեկութիւնները մեր և մեր գրականութեան մասին: Այն ժամանակ (1888 թ. օգոստոսին) ժողովրդեան ուսումնասիրութիւնը վերնագրով մի յօդուած հրատարակեցի «Արևելք»-ում որով մի կողմից աշխատեցի ըստ կարելոյն նրանց սխալն ուղղել, միւս կողմից զգուշացնել Թիւրքիայի Հայ գրագէտներին, որ ամեն մի պատահական մարդու ասածներն ու գրածները հալած իւրի տեղ չընդունեն և մոլորութեան մէջ չընկնեն...

Նոյն նախազուշուութեան կարօտ է նաև մեր մամուլը: Վերջին տարիներս մեր մի քանի թերթերը մի առանձին բարեհաճ արամադրութիւն են ցոյց տալիս դէպի Թիւրքիայի Հայ գրողները: Ես կողմնակից չեմ Վովկասի Հայ մամուլը Վովկաս

ցինքերին՝ զօկարինային և ընդունակութիւնների առաջ մամուլի էջեր փակելը մահացու յանցանք եւ համարում: Սակայն ուրիշ բան են թղթակցութիւնները, վէպերը, թատերական գրուածքներն, ուրիշ է գիտնական կամ կէս գիտնական բնաւորութիւն ունեցող աշխատութիւնները, որոնց թուին պատկանում է երկու աստղի աշխատութիւնը: Որովհետեւ այս վերջին տեսակի աշխատութիւնները ծառայում են որպէս՝ յատակագիծ, որի վրայ ընթերցողը պիտի կառուցանէ իւր հասկացողութեան, իւր գաղափարի շէնքը, ուստի դրանով մոլորութեան մէջ են ընկնում ոչ միայն թերթերն, այլ և հաշարաւոր ընթերցողներ: 2է՝ որ մեր մամուլի պատմութիւնը լինէ է այսպիսի փաստերով, չէ՞ որ մեր մամուլի ղեկավարների մէջ չը կայ մէկը, որ ի սօսոյ ծանօթ լինի Արեւմտեան հայերի և նրանց գրականութեանը:

Երկու աստղի այս գրական տեսութիւնը բռնում է Ռֆանբերդի 67 մեծագիւր երեսները և բաժանուած երկու շրջանի — 1850—1880 և 1880—1890-ը, պէտք է ասեմ, որ դեռ դրամի մի երեսն է և այն կեղծ երեսը: Դրամի միւս երեսը՝ իսկականը, որի համար միայն նա յանձն է առել այդ ծանր աշխատութիւնը — նա չի ցոյց տալիս. այլ բաւականանում է նրա մասին ակնարկութեամբ միայն, իհարկ թէ Ռֆանբերդի միւս միւս խմբագրութեան և թէ նրա նշոյնքան միամիտ ընթերցողների խնորժակը գրգռելու համար: Օրինակ, յօդուածը վերջացնելուց առաջ նա շեշտում է «Մասիսը» «Արեւելք»-ից բաժանուելու և առաջինի գաղարման վրայ, որ տեղի է ունեցել խմբագիրներից մէկի բանտարկութեամբ, միւսի փախուստով: Եւ յօդուածը վերջացնում է այս խօսքերով.

«Գրական ուժերը, որ 1890 հոկտեմբերին բայքայուած էին, նորէն իրար պիտի գտնեն, բայց ոչ «Արեւելք»-ի կամ «Մասիս»-ի շուրջը. նոր կենդրոն մը պիտի հաստատուի»: Իսկ այդ շրջանի, նոր կենդրոնի պատմութիւնը նա թողնում է մի ուրիշ տեսութեան, ուր խոստանում է յիշատակել անուններ կարգ մը գրողներու, որոնք ուշագրաւ դէմքեր կը հանդիսանան:

Ես անսխալ կարող եմ ասել, որ այդ նոր կենդրոնը «Հայրենիք»-ն է, իսկ ուշագրաւ դէմքերը Հրանտ, Արփիարեան, Բաշալեան, Կամսարական, Զօհրապ, Օտեան, Հահաղարեան և այս կարգի ուրիշները:

Բայց արդեօք երկու աստղը քաջութիւն պիտի ունենա՞յ իւր տեսութեան մէջ տեղ տալու նաև այն բանին, թէ ինչպիսի կրիտիքական արիւն-օրերում լոյս տեսաւ Արփիարեան խրմբի «Հայրենիքը» և Պարտիզակցի Վահան վարդապետի «Լոյս»-ը:

Կան մարդիկ, որոնք մի սովորական դէմք կամ դէպք արտասովոր չափով մեծացնելու համար, դիտմամբ նրանց շրջապատող դէմքերն ու դէպքերը արհեստական կերպով հասցնում են հիւլէների մանրութեան: Երկու աստղի ամբողջ աշխատութեան մէջ պարզ նկատելի է այդ բանը, որի մասին ակնարկել ևս առաջին տողերում: Քիչ վերը յիշեցի, թէ ո՞րն է հեղինակի յիշած Նոր կննդորոնը և թուեցի ուշագրաւ դէմքերից մի բանիսի, կարող եմ ասել, գլխաւորների անունները: Այն յետին միտքը, որի մասին շեշտել եմ առաջ, ընթերցողի ուշադրութիւնը նրա վրայ հրաւիրելով,—նոր կննդորոն՝ «Հայրենիք»-ը և ուշագրաւ դէմքերը՝ Հայրենիքականները Պովկասի հայերիս աչքում մինչև երկինք հանելու միտքն է: Ահա այդ է պատճառը, որ այդ նոր կննդորոնից ու ուշագրաւ դէմքերից դուրս միւս բոլոր թերթերն ու գրական գործիչներն այնքան անկենդան ու տոգոյն են դուրս եկել երկու աստղի գրչի տակից:

Թէ որքան ուղիղ է իմ գուշակութիւնը—այդ ընթերցողն առիթ կունենայ ստուգելու, երբ երկու աստղը, միւս անգամ, համաձայն իւր խոստման, հանդէս կը բերէ նոր կննդորոնն ու ուշագրաւ դէմքերը:

Իհարկէ այն ժամանակ ես էլ առիթ կունենամ իմ վերջին խօսքն ասելու երկու աստղի ամբողջ աշխատութեան մասին:

«Թիւրքիոյ Հայոց արդի գրականութիւնը» աշխատութեան ընթերցողը ականայ գալիս է այն եղրակացութեան, թէ եթէ նրանց գրականութիւնը, մամուլը և այլն չեն ծաղկել, յառաջագիմել—մեղաւորն անպայման կառավարութիւնն է: Այսպիսի գանգատներ շատ ենք լսել: Բայց սա ճշմարտութեան մի կէտն է միայն. միւս կէտը պէտք է որոնել հենց իրենց՝ Թիւրքիայի Հայերի մէջ: Թիւրքիայի հայ մարդը, ո՞ր դասակարգին էլ պատկանելիս լինի նա, Թիւրքիայի հայ գործիչը, նոյնպէս անխտիր, իւր յեղեղուկ, միշտ քամու առաջ ձկուղ բնաւորութեամբ իւր միջավայրի հարազատ զաւակն է: Այդ հայը լինի գրագէտ կամ կօչակար, հրապարակախօս կամ ներկարար, չըն-

չին բացառութեամբ բոլ և, կեղծաւոր, շողոքորթ, դուրկ կամ-
քի ամբողջութիւնից, համոզմունքի հաստատութիւնից, նա պեր-
ճախօս և, մինչև անգամ շատախօս, բայց ոչ խօսուածքի, ոչ
գրուածքի մէջ կայ վճռականութիւն, կորով, շեշտ՝ նա վախկոտ
է հրէայի նման, չի կարող համարձակ ասել կամ գրել Հայ ազ-
գը, ազգային գրականութիւնը.— այլ կասի և կը գրի Հայ
ցեղը, տոհմային գրականութիւնը, շատ լաւ գիտնալով ազգ
և ցեղ կամ տոհմ բառերի տարբերութիւնը, երբ Պոլսեցի հայը
ուղենայ մէկին ասել վատ ես, սխալ ես, նախ բան այդ՝ նա
մի ահա՛գին ճառ կը խօսի, վատ և սխալ բառերի յոժը թու-
յացնելու կամ ուղղակի աննկատելի դարձնելու համար:

Վերջրէք նշյնիսկ յայտնի հրապարակախօսի համբաւ վա-
յելող Պոլսեցի հայերէն. ուշի ուշով կարդացէք նրանց գրած-
ները; նախագասութիւնները, մաքերը, բառերը, ենթարկեցէք
անայիլի և կը տեսնէք որ չը կայ մաքի խորութիւն, չը կայ
շեշտի համաձայնութիւն, չը կայ յոժ, կորով, գրական կրակ,
ընդհակառակը ամեն մի բառի տակ գուր կը գտնէք շոյելու,
շողոքորթելու, հաճոյանալու ձգտում:

Այսպէս են եղել և այսպէս են Թիւրքիայի հայ գրագէտ-
ների ամենամեծ մասը:

MARS

Գ. ՇՐԷԹԴԷՐ. «Ծապօնիա կամ՝ ծագող արեգակի եր-
կիրը»։ ՈՒՆԱ. Թարգմ. Հ. Ա. Հրատ. Ե. Զօհրաբեան և
Մ. Սուլխանեան ընկերութեան:

Վերջերս մեր մէջ՝ գլխաւորապէս Թիֆլիզում—մանր հրա-
տարակիչների նախաձեռնութեամբ, պարբերաբար, յոյս են
տեսնում գրական բովանդակութեամբ—մեծաւ մասամբ վիպա-
կան թէ ինքնուրոյն և թէ թարգմանական մանր բրօ-
շիւրներ, որոնց մի մասն արտատպութիւններ են այս
կամ այն թերթից ու հանդիսից: Անշուշտ, չպէտք է յուսալ,
որ այս տեսակի մանր հրատարակիչների ձեռքով՝ հրատարակ-
չական գործը կարողանար մեղանում մեծ ծաւալ ստանալ, և
կամ լուրջ ու բազմակողմանի ընաւորութիւն կրէր, քանի որ
սրանց ամբողջ հրատարակչական ընդգլխն մի քանի հաջիւր
մանէթից այն կողմը չէ անցնում, այն էլ մեծ մասամբ կազ-